

«17» սեպտեմբեր 2019թ.

No 2548 - Ա

ԴԵՂԱՅԻՆ ԱԼԵՐԳԻԿ ՄԱՇԿԱՅԻՆ ՓՈՐՁԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Հաստատել «Դեղային ալերգիկ մաշկային փորձերի կատարման գործելակարգը` համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակ. Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Էլեկտրոնային առողջապահության ներդրման բաժնի ղեկավար Ծաղկանուշ Սարգսյանին` սույն հրամանի հաստատումից հետո, սեղմ ժամկետում ապահովել գործելակարգի մուտքագրումը միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ:
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին` ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ սույն հրամանով հաստատված գործելակարգը ընդունելի գիտություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լևոն Հակոբյանին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳ ԴԵՂԱՅԻՆ ԱԼԵՐԳԻԿ ՄԱՇԿԱՅԻՆ ՓՈՐՁԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1. Ապացուցողական բժշկության տվյալների համաձայն՝ դեղային ալերգիկ մաշկային փորձերը, որոնք նախկինում կիրառվել են, այժմ արգելվում են, քանի որ տարբեր տեսակի ենթամաշկային փորձերը հավաստի չեն և կարող են առաջացնել անցանկալի, սուր, կյանքին վտանգ ներկայացնող ռեակցիաներ, հատկապես այն անձանց մոտ, որոնց մոտ նախկինում եղել են ալերգիկ, անաֆիլակտիկ ռեակցիաներ:

2. Ներկայումս կիրառվող ժամանակակից դեղային ալերգիկ փորձերն են.

1) ապլիկացիոն պատչ (patch-testing).

2) մաշկային պրովոկացիոն դեղաչափավորված փորձեր (provocation test)՝ ենթամաշկային, ներմաշկային և բերանացի ներընդունման (per oral) ուղիներով:

3. Յուրաքանչյուր դեղի համար կա մշակված գործելակարգ-սխեմա, որը կիրառվում է ալերգոլոգի կողմից միայն մասնագիտացված այն բաժանմունքներում, որտեղ կան առաջին անհետաձգելի բժշկական օգնության, իսկ անհրաժեշտության դեպքում ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման միջոցառումների իրականացման հնարավորություն, քանի որ տվյալ փորձի/թեստի ժամանակ կարող են առաջանալ անցանկալի, սուր, ընդհուպ մինչև կյանքին սպառնացող ռեակցիաներ:

4. Պրովոկացիոն դեղաչափավորված թեստը կատարվում է միայն այն դեպքերում, երբ հնարավոր չէ փոխարինել կասկածվող դեղային խումբը այլ խմբի հետ, ինչպես նաև, եթե նախկինում (անամնեզում) եղել է դեղի նկատմամբ զարգացած, հաստատված ալերգիկ ռեակցիա/գերզգայնություն, ընդ որում կլինիկական ախտանիշները վերանալուց 4- 6 շաբաթ անց:

5. Դեղի հետ պատճառական կապի հաստատման համար ոսկե ստանդարտ է համարվում պրովոկացիոն դեղաչափավորված թեստը՝ կասկածվող դեղի օրգանիզմ լիարժեք-ամբողջական բուժիչ դեղաչափի ներմուծմամբ:

6.Եթե հիվանդը չի նշում նախկինում ունեցած ալերգիկ ռեակցիայի մասին, դեղային փորձ չպետք է կատարել:

Գրականություն՝

1. International Consensus (ICON) on Drug Allergy, 2014

2. BSACI guidelines for the management of drug allergy, R.Mirakian, P.W.Ewan, S.R.Durham et al., Clinical and Experimental allergy, 39, p.4361, 2008

Կազմել են՝

Արմինե Հակոբյան, ԵՊԲՀ –ի կլինիկական ալերգոլոգիայի ամբիոնի դոցենտ
Նարինե Միրզոյան ԵՊԲՀ –կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր

Մելանյա Բաղդասարյան ԵՊԲՀ –ի կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի
դոցենտ